

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԿՇԻՈՒՆԵՐԸ

### Դավիթ Մելքոնյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիանի դոցենտ,  
իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ գլխավոր դատախազության  
մեղադրանքի պաշտպանության և դատական  
ակտերի բողոքարկման վարչության պետ*

Հասարակական հարաբերությունների զարգացումն իր ազդեցությունն է ունենում նաև քրեական դատավարության սկզբունքների, ինստիտուտների վրա, ինչն առաջացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրության վերափոխման անհրաժեշտություն: Քրեադատավարական օրենսգրքի նախագծում տեղ գտած կարգավորումները պետք է ամփոփեն ինչպես իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների լուծումները, այնպես էլ հնարավորություն ընձեռեն դիմագրավելու նոր մարտահրավերներին, հիմք դառնան մրցակցային դատավարության նոր, առավել կատարելագործված համակարգի ներդրման համար:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակումը պայմանավորող առաջնահերթությունների շարքում ի սկզբանե կարևորվել են քրեական դատավարությանում մրցակցության գաղափարախոսության վերաիմաստավորումը, դատավարական սկզբունքից դրա վերածումը դատավարական ձևի (ռեժիմի), կիսամրցակցային (իսկ առանձին դրվագներում՝ նաև ինկվիզիցիոն) դատավարությունից լրիվ մրցակցայինի անցնելու գործուն նախադրյալների ամրագրումը: Այս նպատակի իրագործման եղանակներից մեկը պաշտպանության կողմի համար ապացույց հավաքելու հնարավորությունների ընդարձակումն էր, ինչը արտացոլվեց Նախագծում:

Քրեական դատավարության մրցակցային ձևն ամրագրող՝ Նախագծի 21-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրված է, որ դատարանում կողմերն օժտված են իրենց դիրքորոշումը ներկայացնելու և պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի ապացույցներ, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ: Ճիշտ է, բովանդակային առումով նման սկզբունք նախատեսված է նաև գործող քրեական դատավարության օրենսգրքով, սակայն Նախագծով պաշտպանության կողմին թե մինչդատական վարույթում և թե դատարանում վերապահված լիազորությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ստեղծվել են առավել գործուն մեխանիզմներ այս սկզբունքի կենսագործման համար: Միևնույն ժամանակ սկզբունքի մակարդակով ամրագրվել է ի պաշտպանություն մեղադրյալի բերված և պատշաճ ձևակերպված փաստարկները հանգամանորեն ստուգելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

Քրեական դատավարությունում իր իրավունքներն արդյունավետ իրականացման երաշխիքը մեղադրյալի՝ իր պաշտպանությունը համապատասխան մասնագիտական գիտելքներով օժտված անձի՝ պաշտպանին վստահելու իրավունքի երաշխավորումն է

և դրանից բխող և դրա արդյունավետ իրականացումն պահովող մեխանիզմների ստեղծումը: Այս առումով Նախագիծը ինչպես քրեական դատավարություն պաշտպանի ներգրավման, այնպես էլ նրա կողմից իր լիազորությունների իրականացումն ապահովող ընթացակարգերի կարգավորվածության առումով շահեկանորեն տարբերվում է գործող քրեական դատավարության օրենսգրքից: Ինչպես գործող օրենսգրքում, այնպես էլ նախագծում երաշխավորվել է մեղադրյալի՝ իր ընտրությամբ մեկ կամ մեկից ավել պաշտպան ունենալու իրավունքը: Նախագծում սահմանվել է նաև, որ միևնույն վարույթի շրջանակներում նույն պաշտպանը կարող է ներկայացնել միայն մեկ մեղադրյալի, բացառությամբ, երբ նման արգելքը ողջամտորեն կարող է վտանգել արդարադատության շահը, և միաժամանակ երկու կամ ավելի մեղադրյալներ կամավոր, գիտակցաբար և գրավոր հրաժարվել են առանձին պաշտպաններով ներկայացվելու հնարավորությունից: Միևնույն ժամանակ գործի քննության արդյունավետ ընթացքը ապահովելու և վարույթային գործողությունների կատարմանը հնարավոր խոչընդոտները վերացնելու նպատակով Նախագծում ամրագրվել է, որ վարույթային գործողությանը մեղադրյալի բոլոր պաշտպանների մասնակցությունը պարտադիր չէ: Վարույթային գործողությունը, որին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, չի կարող անօրինական ճանաչվել, եթե համապատասխան մեղադրյալի ոչ բոլոր պաշտպաններն են մասնակցել տվյալ գործողությանը: Այսինքն, մեկից ավելի պաշտպանների առկայության պարագայում մեղադրյալը չի կարող պահանջել վարույթային գործողությանը նրանց բոլորի անվերապահ մասնակցությունը: Մեկ պաշտպանի ներկայությունն արդեն իսկ բավարար է արձանագրելու համար, որ տվյալ գործողությունը կատարվել է պաշտպանի ներկայությամբ:

Նախագիծը հանգամանորեն կարգավորել է նաև պաշտպանից հրաժարվելու ընթացակարգը: Ընդ որում, այս պարագայում ևս Նախագիծով տրված կարգավորման հիմքում դրվել է մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը երաշխավորող ընթացակարգ: Նախագծով սահմանվել են այն պայմանները, որոնց առկայության պարագայում է միայն, որ վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի ընդունելու մեղադրյալի՝ պաշտպանից հրաժարումը: Մասնավորապես, պաշտպանից հրաժարվելը վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալն այդ մասին հայտարարել է 1) սեփական նախաձեռնությամբ, 2) կամավոր և 3) վարույթին մասնակցող պաշտպանի ներկայությամբ: Մեղադրյալը պարտավոր չէ բացահայտել պաշտպանից հրաժարվելու պատճառները: Այն դեպքում, երբ պաշտպանից հրաժարվելը պայմանավորված է մեղադրյալի անվճարունակությամբ, վարույթն իրականացնող մարմինը, սույն օրենսգրքով նախատեսված կարգով, անհապաղ պահանջում է պաշտպան նշանակել պետական միջոցների հաշվին:

Միևնույն ժամանակ, բացառելու համար այն իրավիճակները, երբ պաշտպանից հրաժարվելը և նոր պաշտպան հրավիրելը կարող է մեղադրյալի համար լինել վարույթի ընթացքը խոչընդոտելու կամ դատավարությունը ձգձգելու միջոց, Նախագիծով սահմանվել է, որ վարույթն իրականացնող մարմնի համար պարտադիր չէ նոր պաշտպանից հրաժարվելու՝ մեղադրյալի կամարտահայտությունը, եթե մեղադրյալը ակնհայտ չարաշահում է պաշտպանից հրաժարվելու իր իրավունքը: Այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը որոշմամբ չի ընդունում պաշտպանից հրաժարվելը:

Քրեական դատավարությունում մրցակցության տարրերի ընդլայնման համար անկյունաքարային նշանակություն ունի ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նա-

խազժով պաշտպանին տրված իրավունքը՝ ձեռք բերելու և ներկայացնելու ապացույցներ՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար: Նախագծի 103 հոդվածի համաձայն՝ ապացույցները հավաքվում են քրեական վարույթի ընթացքում՝ սույն օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողությունների կատարման միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով՝ օտարերկրյա իրավասու մարմինների կողմից համապատասխան գործողությունների կատարման միջոցով: Նախագծի 49 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի ձեռք բերել և ներկայացնել ապացույցներ՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար: Եթե գործող օրենսգրքի համաձայն՝ պաշտպանը կարող է ներկայացնել նյութեր, որոնք ապացույց ճանաչելու հարցը կախված է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունից, այս կարգավորման պարագայում արդեն դրանք միանշանակ համարվելու են ապացույց, կցվելու են գործին՝ ապահովելով դատարանում հետազոտելու հնարավորությունը: Ընդ որում, գործում է ապացույցի թույլատրելիության կանխավարկածը, այսինքն՝ վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, ներառյալ վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած ապացույցները, համարվում են թույլատրելի, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգով հակառակը չի հաստատվել: Վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած ապացույցների օգտագործման հնարավորությունը որոշմամբ հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ վարույթի շահագրգիռ մասնակցի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ: Ամեն դեպքում անթույլատրելի ճանաչված ապացույցները պահվում են վարույթի նյութերում՝ դատավարության մասնակիցներին հնարավորություն ընձեռելով դրանց թույլատրելիությունը վիճարկելու դատավարության հետագա փուլերում:

Նախագծով պաշտպանին հնարավորություն է ընձեռվել մեղադրյալի պաշտպանության իրականացմանը վերաբերող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերով նաև ձեռք բերելու փորձագետի կարծիք: Այսպես, նախագծի 49 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ մեղադրյալի պաշտպանության իրականացմանը վերաբերող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերով հարկավոր է ստանալ փորձագետի կարծիք: Ընդ որում, ապացույցների ցանկը սահմանող՝ նախագծի 86 հոդվածը փորձագետի կարծիքը ներառել է ապացույցների շարքը:

Փորձագետի կարծիքը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ վարույթի մասնավոր մասնակցի առաջադրած, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ գրավոր հիմնավորված հետևությունների ամբողջություն է, որոնց փորձագետը հանգել է՝ վարույթի մասնավոր մասնակցի տրամադրած նյութերը հետազոտելով կամ առանց դրա: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ եթե վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ փորձաքննություն կատարելիս փորձագետն իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ հետևությունների կարող է հանգել վարույթի համապատասխան նյութերը, դիակը կամ վարույթին ներգրավված համապատասխան անձին հետազոտելով, ապա վերջինս կարծիք կարող է տալ բացառապես վարույթի մասնավոր մասնակցի տրամադրած նյութերը հետազոտելով կամ առանց դրա: Նախագիծը չի պարտադրում վարույթն իրականացնող մարմնին՝ փորձագետի կարծիք ստանալու նպատակով պաշտպանի պահանջով վերջինիս տրամադրել վարույթի նյութերը:

Ի տարբերություն գործող քրեական դատավարության օրենսդրությամբ առկա կարգավորման, երբ պաշտպանն իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող քննչական գործողությանը կարող է մասնակցել միայն քրեական հետապնդման մարմնի թույնտվությամբ (քրեական դատավարության օրենսգրքի հոդված 73, 1-ին մաս, 3-րդ կետ), ապա նախագծով պաշտպանին տրվել է բացարձակ իրավունք՝ մասնակցելու իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող ցանկացած ապացուցողական կամ այլ վարույթային գործողության:

Անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է նաև մեղադրյալի իրավունքը՝ ձերբակալման կամ կալանավորման դեպքում պահանջելու անվճար բժշկական զննում և ստանալու անվճար եզրակացություն, ինչպես նաև իր ընտրությամբ հրավիրելու բժիշկ և անարգել հաղորդակցվելու նրա հետ՝ առանց տեսողական կամ լսողական վերահսկման: Այս դրույթի ամրագրումը որոշակիորեն կլուծի մեղադրյալների կողմից դատական քննության ընթացքում բարձրացվող իրենց նկատմամբ նախաքննության ընթացքում ենթադրաբար կիրառված խորթ մեթոդների վերաբերյալ հայտարարությունների հարցը: Նմանատիպ իրավունքի ամրագրումը և դրա պատշաճ իրականացման հնարավորության ապահովումը թույլ կտան կանխել նմանատիպ իրավիճակները, իսկ որոշակի դեպքերի արձանագրման պարագայում՝ բացահայտել դրա համար պատասխանատու անձանց և կիրառել համապատասխան պատասխանատվության միջոցներ:

Մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսակետից կարևոր քայլ է նաև ձերբակալված անձի նվազագույն իրավունքների նախատեսումը: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը ամրագրում է ձերբակալված անձի հետևյալ նվազագույն իրավունքները՝

7) փաստացի ազատությունից զրկվելու պահին բանավոր, իսկ հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահին նաև գրավոր տեղեկացվել սույն հոդվածով նախատեսված նվազագույն իրավունքների և պարտականությունների մասին,

8) իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառը,

9) պահպանել լռություն,

10) իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին,

11) հրավիրել փաստաբան,

12) իր պահանջով ենթարկվել բժշկական զննման:

Որոշակի տարակարծություններ են առաջացել մեղադրյալի կողմից ցուցմունք տալու դեպքում սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախագուշացնելու հարցի շուրջ: Ի տարբերություն գործող քրեական դատավարության օրենսգրքի, որի ժամանակ մեղադրյալը սուտ ցուցմունք տալու դեպքում չէր ենթարկվում քրեական պատասխանատվության, ապա նախագծով իրավիճակը փոխվում է. եթե մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, ապա քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության և նախագուշացնում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Գտնում ենք, որ նման կարգավորումը հնարավորություն է տալիս արժանահավատ դարձնելու մեղադրյալի ցուցմունքները, կասկածի տակ չդնելու դրանք, եթե այլ բան չի հաստատվում գործի քննության ընթացքում: Իհարկե ակնհայտ է, որ այս դրույթի ամրագրումը պաշտպանության կողմի համար արդյունավետ միջոց է միայն այն դեպքում,

երբ մեղադրյալը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում:

Դատաքննության ընթացքում ևս պաշտպանության կողմին պաշտպանությունը առավել արդյունավետ կազմակերպելու նոր հնարավորություններ են ընձեռվել: Պաշտպանական կողմի իրավունքների տեսանկյունից ուշագրավ նորամուծություն է այն, որ դատարանում մինչև ապացույցների հետազոտումն սկսելը բացման խոսքով հանդես են գալիս նախ հանրային մեղադրողը, իսկ այնուհետև՝ վերջինիս ցանկությամբ, պաշտպանը կամ պաշտպանությունն ինքնուրույն իրականացնող մեղադրյալը: Հանրային մեղադրողը բացման խոսքում ներկայացնում է մեղադրանքի փաստական հիմքը, ինչպես նաև մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը, իսկ պաշտպանության կողմի բացման խոսքում ներկայացվում է մեղադրանքի վերաբերյալ դիրքորոշումը:

Ընդգծենք, որ գործող ընթացակարգի համաձայն՝ մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակումից հետո նախագահող դատավորը ամբաստանյալից ճշտում է՝ մեղադրանքը պարզ է, ընդունո՞ւմ է մեղադրանքը, եթե այո՝ ի՞նչ չափով, մասնակի՞, թե՞ ամբողջությամբ, իսկ պաշտպանին վերապահված է դատաքննության ավարտից հետո ճառով կամ ռեպլիկով հանդես գալու իրավունք:

Ընդհանուր առմամբ պաշտպանության կողմի շահերից է բխում նաև վարույթի ողջամիտ ժամկետի սկզբունքի նախատեսումը: Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ամրագրող ինչպես սահմանադրական, այնպես էլ կոնվենցիոնալ դրույթը նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, որոնք կարող են վտանգել գործի քննության արդյունավետությունը, հանգեցնել կամայականությունների: Դրանք միանշանակ չեն բխում պաշտպանության կողմի, ինչու՞ չէ՝ նաև արդարադատության շահերից:

Այսպիսով, միանշանակ է, որ նախագծով էականորեն ընդլայնվել են պաշտպանի՝ ապացույցներ հավաքելու հնարավորությունները՝ դրանով իսկ առավել լայն մեխանիզմներ ստեղծելով մեղադրյալի պաշտպանության իրականացման համար:

Պաշտպանի՝ ապացուցման գործընթացին մասնակցելու հնարավորության ընդլայնմանը զուգահեռ միջոցներ են ձեռնարկվել նաև կանխելու համար վերջինիս կողմից այս գործընթացում իր իրավունքների հնարավոր չարաշահումը: Մասնավորապես, առաջին անգամ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանվել է իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը՝ նպատակ ունենալով երաշխավորել պաշտպանի կողմից, այդ թվում նաև ապացուցման ընթացքում իր լիազորությունների պատշաճ իրականացումը: Մասնավորապես, Նախագծի 29-րդ հոդվածը, որը կրում է «Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը» վերտառությունը, ուղղակիորեն սահմանում է, որ վարույթի մասնավոր մասնակիցները և վարույթին օժանդակող անձինք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին: Իրավունքների չարաշահում թույլ տված կամ պարտականությունները չարամտորեն չկատարած անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել նրա վարքագծին համաչափ դատավարական սանկցիա, եթե այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը:

## THE POSSIBILITIES FOR THE DEFENSE BY THE NEW DRAFT CODE OF CRIMINAL PROCEDURE

**Davit Melkonyan**

*Head of Department at the Generals Prosecutors Office*

*Chair of criminal procedure and criminalistics*

*Associated professor*

---

The article is dedicated to the regulations of guarantees of defense stipulated by the new draft Code of Criminal Procedure. In this context, reference is made to participation of defense to the procedural actions, as well as the possibility of obtaining new evidence. Comparing the acting Criminal Procedure Code, the author comes to the conclusion that the Draft significantly expands the possibilities of defense in participation in the process of obtaining evidence. At the same time the author argues that this draft Code also provides mechanisms of preventing the possibilities of abuse.

## НОВЫЕ ПРОЦЕССУАЛЬНЫЕ ВОЗМОЖНОСТИ ЗАЩИТЫ ПО НОВОМУ ПРОЕКТУ УГОЛОВНОГО ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА

**Давид Мелконян**

*Начальник управления при Генеральной прокуратуре*

*Доцент кафедры уголовного процесса и*

*криминалистики ЕГУ, кандидат юридических наук*

---

Статья посвящена регулированию гарантий защиты, предусмотренных проектом нового Уголовно-процессуального кодекса. В этом контексте делается ссылка на участие защиты в процессуальных действиях, а также возможностям получения новых доказательств. Сравнивая с действующим уголовно-процессуальным кодексом, автор приходит к выводу, что проект значительно расширяет возможности защиты в процессе получения доказательств. В то же время автор утверждает, что новый кодекс также предусматривает механизмы предотвращения возможностей злоупотребления правами.

*Բանալի բառեր՝* ապացույց, պաշտպան, երաշխիք, փորձաքննություն, ընդլայնել, ապացույց հավաքել, Բրեւիլան դատավարության օրենսգրքի նախագիծ

**Ключевые слова:** доказательство, защитник, гарантия, экспертиза, расширить, собирать доказательства, Проект Уголовного процессуального кодекса,

**Key words:** evidence, defense-attorney, guaranty, expertise, extend, obtain evidence, Draft Code of Criminal Procedure.